

**ՀՈՒՉԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ
ԷՄՈՏԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ**

Սույն հոդվածում դիտարկվում են ժամանակակից էմոտիոլոգիայի հիմնական խնդիրներից մեկի՝ հուզայնության կարգի ուսումնասիրության ուղղությունները և մեթոդները՝ ըստ հաղորդակցական, մարդակենտրոն, ճանաչողական, իմաստաբանական և հոգեկենդանական մոտեցումների: Անդրադարձ է կատարվում էմոտիոլոգիայի առաջացման և արդի ուսումնասիրության խնդիրներին: Ներկայացվում է «հուզականություն» և «հուզայնություն» եզրույթների տարբերությունը:

***Բանալի բառեր.** էմոտիոլոգիա, հույզերի լեզվաբանություն, հուզակա- նություն, հուզայնություն, բառիմաստի հուզային բաղադրիչ, էմոտիվ*

Գժվար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ ոլորտ, որն այս կամ այլ կերպ չառնչվի հույզերի հետ: Մարդու հուզական ոլորտի ուսումնասիրությամբ զբաղվում են շատ գիտություններ և գիտակարգեր, ինչպես օրինակ՝ հոգեբանությունը, կենսաբանությունը, փիլիսոփայությունը, բնախոսությունը, լեզվաբանությունը, հոգեկենդանությունը և այլն:

Լեզվաբանությունն ամենից ուշ է անդրադարձել հույզերի ուսումնասիրության խնդրին: Մինչև 70-ական թվականների կեսը լեզվում մարդու հուզական ոլորտի արտացոլման, հույզերի լեզվական իմաստավորման և խոսքայնացման, ինչպես նաև կարգերի բաժանման (կատեգորիզացիայի) թեմայով լեզվաբանության մեջ հազվադեպ հայտնվող աշխատանքները հետաքրքրություն չէին առաջացնում և հաճախ չէին ընդունվում: Գոյություն ունեւ կարծիք, որ լեզվաբանները վախենում էին հույզերից և քիչ էին գրում դրանց մասին /Aitchison, 1985: 70/:

Սակայն այն բանից հետո, ինչ լեզվաբանության մեջ ուրվագծվեց նոր՝ մարդակենտրոն ուղղվածությունը, որի ուշադրության կենտրոնում լեզվի ստեղծողը, կրողը և կիրառողն էր՝ իր ներաշխարհով և հոգեբանությամբ, լեզվաբանները այլևս չէին կարող շրջանցել հույզերի՝ լեզվում ամենամարդկային գործոնի ոլորտը: Այսպիսով մարդը՝ շրջակա աշխարհի հետ իր հարաբերությունների բազմազանությամբ և իր ներսում ընթացող գործընթացներով (մտքեր, հույզեր, զգացողություններ), հայտնվեց ուսումնասիրությունների կենտրոնում:

Նման մարդակենտրոն ուղղվածության արդյունքներից մեկը եղավ **էմոտիոլոգիայի** ձևավորումը, որը լեզվաբանության մեջ ունեցավ յուրովի դրսևորում՝ հույզերի լեզվաբանության ձևով, որը ձևավորվել է հոգեբանության և ավանդական լեզվաբանության սահմանագծում:

Ինչպես նշում է Վ. Ի. Շախովսկին, *հույզերի լեզվաբանությունը (Էմոտիոլոգիան)* սկիզբ է առել լեզվաբանների մի մեծ խմբի (Մ. Բրեալ, Կ. Բյուլեր, Է. Սեպիր, վան Գինենկեն, Գ. Գիյոմ, Շ. Բալլի և այլք) հին վեճից այն հարցի շուրջ, թե արդյոք լեզվաբանությունը պետք է զբաղվի հուզական տարրերի ուսումնասիրությամբ /Шаховский, 1995/: Երկար ժամանակ գիտնականները այս հարցի լուծման շուրջ տարակարծիք էին: Նրանց մի մասը, օրինակ՝ Կ. Բյուլերը, Է. Սեպիրը և Ի. Գիյոմը, գտնում էին, որ լեզվում գլխավորը ճանաչողական գործառույթն է: Այդ պատճառով նրանք բացառում էին հուզական տարրի ուսումնասիրությունը լեզվաբանական հետազոտություններում: Մյուսները (Շ. Բալլի, վան Գինենկեն, Մ. Բրեալ) ենթադրում էին, որ հույզերի արտահայտումը լեզվի գլխավոր գործառույթն է /Goleman, 1997/:

Ինչպես նշում է Շ. Բալլին՝ «անհնար է կառուցել լեզվական համակարգ՝ առանց հաշվի առնելու մարդու անձնային հատկանիշները, զգացմունքները և հույզերը: Հուզական վերաբերմունքը լեզվական տարրի ամենակարևոր բաղադրիչներից մեկն է» /Балли, 1961: 221/:

Էմոտիոլոգիան բուռն զարգացում է ապրել անցած դարի 80-ական թվականներից: Վ. Շախովսկու բնորոշմամբ՝ էմոտիոլոգիան գիտություն է «հույզերի խոսքայնացման, արտահայտման և հաղորդակցման մասին» /Шаховский, 1995: 8/: Էմոտիոլոգիայի խնդիրը լեզվական միավորների իմաստի կազմում առկա սուբյեկտիվ տարրերի ուսումնասիրությունն է, ինչպես նաև լեզվի հուզային ծածկագրի վերաբերյալ գիտելիքների ձևավորումը և կառուցումը /Ионова, 2004: 5/:

Լեզվաբանության մեջ նոր՝ էմոտիոլոգիական ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունները կապված են որոշակի բարդությունների հետ, քանի որ հույզերը հոգեբանական գիտության ամենաբարդ և հակասական ոլորտներից են: Էմոտիոլոգիայի շրջանակներում կատարվող հետազոտությունները ներկայումս ուղղված են հույզերի տարբեր դրսևորումներն արձանագրող հուզական նշանների տիպաբանության, հույզերի հաղորդակցման, տարբեր լեզուներում միևնույն հույզի անվանման միջոցների համահարաբերակցության, հույզերի արտահայտման լեզվաբանական և հարալեզվաբանական միջոցների հարաբերակցության, տեքստի հուզական երանգավորման, հույզերի արտահայտման ազգամշակութային առանձնահատկությունների, հուզայնության բառարանագրության, հույզերի նկարագրման և արտահայտման գործաբանության, հույզերի նմանակման, նմանակեղծման և մի շարք այլ խնդիրների ուսումնասիրությանը /Шаховский 1995: 3-15/:

Սակայն ժամանակակից էմոտիոլոգիայի ամենաբարդ և արդիական խնդիրը **հուզայնության** կարգի ուսումնասիրության խնդիրն է: Այն բարդ և բազմահայեցակետային երևույթ է: Հարկ է նշել, որ նախքան անցած դարի 80-ական թվականները լեզվաբանական հետազոտություններում **հուզայնության** կարգը բացակայում էր, քանի որ հույզերն արտացոլելու լեզվի կարողությունը գլխավորապես կապվում էր **հուզականության** («эмоциональность») հասկացության հետ, որը լեզվաբանները փոխառել էին հոգեբանությունից: Հույզերի

խոսքային բնութագրի պայմանական բնույթի գիտակցումը լեզվաբաններին դրդեց նոր նշանների որոնմանը, որոնք կմրցակցեին հոգեբանական եզրույթների հետ: Արդյունքում ի հայտ եկավ «հուզայնություն» հասկացությունը /Калимуллина, 2006: 72/:

Այժմ «**հուզականություն**» (*эмоциональность*) և «**հուզայնություն**» («*эмотивность*») եզրույթները լայն կիրառություն ունեն ինչպես հոգեբանության, այնպես էլ լեզվաբանության մեջ: Սակայն նկատվում է սահմանազատման միտում՝ ըստ գիտության ոլորտի: Այսպիսով՝ հոգեբանության մեջ շրջանառվում է *հուզականություն* հասկացությունը, որը հոգեբանների կողմից դիտարկվում է որպես «մարդու հուզական ոլորտի ընդհանրական բնութագիր» /Ильин, 2001: 458/, իսկ *հուզայնությունը* սահմանվում է որպես լեզվական կարգ, որը հույզերն արտահայտող միջոցների ամբողջությունն է այս կամ այն լեզվում:

Ինչպես հայտնի է, ժամանակակից լեզվաբանությունը բնութագրվում է որպես բազմահարացուցային գիտություն, և լեզվաբանական տեսությունները գործում են ոչ թե մեկ հարացույցի շրջանակում, այլ խմբավորվում են երեք հիմնական հարացույցերի ներսում՝ գործառական, մարդակենտրոն և ճանաչողական /Кубрякова, 1994/: Նշված հարացույցերին համապատասխան՝ լեզվում հուզայնության ուսումնասիրության ժամանակ կարող են կիրառվել տարբեր մեթոդներ, քանի որ հույզերը հետաքրքրում են լեզվաբանության միանգամայն տարբեր ճյուղերին: Հուզայնության վերաբերյալ տարբեր տեսակետերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրա ուսումնասիրության մի քանի հիմնական ուղղություններ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Հաղորդակցական մոտեցման շրջանակներում հուզայնության կարգի ուսումնասիրությունը կապված է լեզվի՝ հույզեր արտահայտելու հատուկ գործառույթի խնդրի հետ, որի անվան (հուզական, հուզային, արտահայտչական, հուզարտահայտչական գործառույթ) և մյուս գործառույթների շարքում զբաղեցրած տեղի հարցում լեզվաբանները տարակարծիք են: Այսպես, օրինակ՝ Կ. Բյուլերը առանձնացնում է *արտահայտչական* գործառույթը, որի նպատակը որոշակի հաղորդագրություն ուղարկողի ներքին վիճակի արտահայտումն է /Бюлер, 1993/: Տվյալ գործառույթը Շ. Բալլին անվանում է *արտահայտչականություն* գործառույթ, որի հետ է նա կապում լեզվում այն բազմաթիվ միջոցների առկայությունը, որոնք ծառայում են հուզականորեն երանգավորված բովանդակության արտահայտմանը: Իսկ սհա Ռ. Յակոբսոնի համար «արտահայտչական» և «հուզական» գործառույթները նույնական են. «Այսպես կոչված հուզական կամ արտահայտչական գործառույթի նպատակն է արտահայտել խոսողի վերաբերմունքը այն բանի նկատմամբ, ինչ նա ասում է: Այն կապված է որոշակի հույզի առկայության տպավորություն թողնելու ձգտման հետ, լինի դա իրական, թե կեղծ» /Якобсон, 1975/: Ա. Ֆոլենը նույնպես գտնում է, որ արտահայտչական գործառույթը կապված է հույզերի հետ. «Արտահայտչական գործառույթում արտահայտվում և հաղորդվում է խոսողի հուզական զգացողությունը» /Foolen, 1997: 17/: Այլ լեզվաբաններ գտնում են, որ անհրաժեշտ է սահմանազատել «հուզական» և «ար-

տահայտչական» գործառույթները (Վ. Ա. Ավրորին, Ն. Գ. Արուսյունովա, Լ. Ա. Կալիմուլինա և այլք): Օ. Ֆիլիմոնովան ընդգծում է հուզական գործառույթի կարևորությունը լեզվի մյուս գործառույթների (հաղորդակցական, տեղեկատվական և այլն) կողքին: Նա նշում է. «ինչպիսի հիմնավորում էլ որ բերեն լեզվաբանները այս կամ այն գործառույթն առանձնացնելու համար, և որքան էլ մասնատված լինի տրված դասակարգումը, հուզական գործառույթը կարող է գործել մյուս գործառույթների հետ միաժամանակ /Филимонова, 2007: 21-22/:

Շատ լեզվաբանների կարծիքով լեզուն ոչ միայն նշանների համակարգ է, այն միաժամանակ մարմնավորում է որոշակի դարաշրջաններին և տարբեր մշակույթներին հատուկ պատկերացումների համակարգը: Ինչպես նշում է Ա. Լենքերսկայան, «բառապաշարի առանձին հատվածի կազմության և մեկ բառի իմաստաբանության մեջ արտացոլվում է որոշակի ժամանակահատվածում լեզվակրին բնորոշ պատկերացումների, գաղափարների, արժեքների աշխարհը» /տե՛ս Гринев-Гриневич, Сорокина, 2005: 17-18/: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում հույզերի ուսումնասիրության **մարդակենտրոն** ուղղությունը, քանի որ հույզերն անվանող բառերի ստուգաբանությունը միանշանակ չի ներկայացվում ստուգաբանական բառարաններում: Այս ուղղությամբ կատարվող ուսումնասիրություններում կիրառվող տարբեր մեթոդների շարքում կարելի է առանձնացնել բառապաշարի համակարգային տարածամասկյա վերլուծության մեթոդը, որը հիմնված է իմաստաբանական դաշտերի մեթոդի վրա /Тарасова, 2015: 42/:

Ճանաչողական մոտեցմամբ հուզայնության կարգի ուսումնասիրության դեպքում հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնվում է տվյալ լեզվում առկա հուզական հասկացութալորտը: Լեզվաբանների մի խումբ զբաղվում է հուզական հասկացությունների և լեզվում դրանց արտահայտման ուսումնասիրությամբ (Վ. Ի. Կարասիկ, Ն. Ա. Կրասավսկի, Կ. Լուց, Չ. Յու. Բալակինա և այլք): Մի շարք այլ հետազոտողների կարծիքով (Ջ. Լակոֆֆ, Մ. Ջոնսոն, Չ. Կովեչեշ, Ի. Ս. Բաժենովա և այլք) հույզերը իմաստավորվում են տարատեսակ փոխաբերություններում, ընդ որում յուրաքանչյուր հույզ կարող է զուգադրվել մի քանի փոխաբերությունների հետ: Ըստ Վ. Յու. Ապրեսյանի՝ փոխաբերությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել հույզի էությունը, քանի որ «փոխաբերություններում իմաստավորվում է ինքնին զգացմունքը, այլ ոչ թե դրա առաջացման իրավիճակը կամ արտաքին որևէ այլ չափանիշներ» /Апресян, 1994: 92/:

Առանձին ուշադրության են արժանի մաս Ա. Վեժբիցկայայի ուսումնասիրությունները, որն առաջարկում է հույզերն ուսումնասիրել «բնական կամ համընդհանուր իմաստաբանական մետալեզվի» (Natural Semantic Metalanguage - NSM) օգնությամբ /Вежбицкая, 1997/: Կատարելով հուզական հասկացությունների համեմատական վերլուծություն մի շարք լեզուներում, նա եզրակացրել է, որ հույզերն անվանող բառերը «պարունակում են որոշակի «սցենարներ», որոնց հիման վրա լեզվակիրը կարող է մեկնաբանել զգացմունքները և կադապարել իր հույզերն ու մյուս մարդկանց հետ

հարաբերությունները» /Вежбицкая, 1997: 343/: Ըստ նրա՝ հույզերը պատկանում են իմաստաբանության ոլորտին և դրանց ուսումնասիրությունը պետք է իրագործվի «իմաստաբանական մետալեզվի» միջոցով, ինչը ենթադրում է հույզերի նկարագրություն պարզ և բոլոր մարդկային լեզուների համար ընդհանուր հասկացությունների (պրիմիտիվների) միջոցով, ինչպիսիք են՝ *զգալ, ցանկանալ, ասել, մտածել, իմանալ, լավ, վատ* և այլն /Вежбицкая, 2001: 20/: Նա գտնում է, որ միայն այս կերպ մենք կարող ենք ուսումնասիրել հույզերը համընդհանուր տեսակետից՝ որևէ լեզվից և մշակույթից անկախ:

Իմաստաբանական մոտեցման շրջանակներում հուզայնության կարգի ուսումնասիրությունը կապվում է բառիմաստի բաղադրական կառուցվածքի խնդրի հետ, և հույզերի ներկայացման հիմնական միջոց է համարվում բառապաշարը /Сидоренко, 2013: 94/: Վ. Շախովսկին առանձնացնում է բառիմաստի *հուզային* բաղադրիչը՝ իմաստի այն մասը «որի օգնությամբ լեզվական միավորը իրականացնում է իր հուզական գործառույթը» /Шаховский, 1983: 9/: Նման բաղադրիչ պարունակող բառիմաստը Վ. Ի Շախովսկին անվանում է հուզային բառ կամ **էմոտիվ**. «Էմոտիվները այն բառայիններն են, որոնք նախատեսված են խոսողների կողմից(հասցեագրողների) հույզերի արտահայտման և/կամ լսողների (հասցեատերերի) վրա հուզական ներգործության համար: Էմոտիվների թվին են դասվում ցանկացած բառայիններ, որոնք կարելի է կիրառել այս կամ այն տիպականացված հույզն արտահայտելու համար» /Шаховский, 1998: 72-74/: Այլ խոսքերով՝ էմոտիվները հուզային իմաստը կրող լեզվական կամ խոսքային միավորներ են, որոնք անվանում են ոչ այնքան առարկան, որքան այդ առարկայի նկատմամբ հուզական վերաբերմունքը: Այլ լեզվաբաններ (Տ. Ա. Գրաֆովա, Վ. Ն. Տելիա) ուշադրություն են դարձնում հուզայնության և գնահատականի միջև առկա կապի վրա: Օրինակ Վ. Ն. Տելիան հուզայնությունը սահմանում է որպես կարգ, որն արտացոլում է իր հիմքում եղած գնահատողական վերաբերմունքը իրականության հանդեպ» /Телия, 1986: 128/:

Հոգելեզվաբանության տեսակետից հուզական բառապաշարը «միայն փոքր մասն է կազմում բառերի այն բազմազանության, որը լեզվակիրն օգտագործում է հույզերի և զգացմունքների արտահայտման և ընկալման համար» /Мягкова, 2000: 31/: Այդ պատճառով հիմնական ուշադրությունը հատկացվում է այն լեզվական միավորներին, որոնք պարունակում են խոսողի համար հուզական նշանակություն ունեցող աղբյուրներ: Այս դեպքում որպես հուզայնության կարգի դրսևորումներ դիտարկվում են բոլոր այն միավորները, որոնք օժտված են հուզական-գուգորդական կապերով /Сидоренко, 2013: 93/: Հոգելեզվաբանական հետազոտությունների արդյունքում առաջ է քաշվել լեզվական միավորների պոտենցիալ հուզականության գաղափարը, համաձայն որի «տեսականորեն ցանկացած բառ (ավելի լայն՝ լեզվի ցանկացած իմաստակիր միավոր) կարող է դառնալ հուզական լիցքի կրող» /Гридин, 1983: 115/: Հուզայնության կարգի հոգելեզվաբանական ուսումնասիրության առանձնահատկությունը գիտափորձերի պարբերական կիրառումն է:

Ուսումնասիրելով հուզայնության կարգի վերաբերյալ տարբեր ուղղությունների ներկայացուցիչների կողմից կատարված հետազոտությունները՝ հանգում ենք այն մտքին, որ վերոհիշյալ մոտեցումները սահմանափակ են և ամբողջական պատկերացում չեն տալիս հուզայնության կարգի մասին: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս ուղղությունների կողմնակիցները սահմանափակվում են կամ լեզվաբանական միավորների և կարգերի ուսումնասիրությամբ, կամ հոգելեզվաբանական վերլուծությամբ: Բացի այդ, հուզայնության նկարագրության համար կիրառվող մեթոդները, որպես կանոն, միակողմանի են, քանի որ դրանք հաշվի չեն առնում մյուս մեթոդներով կատարված աշխատանքների արդյունքները:

Այդ պատճառով մենք առաջարկում ենք կիրառել համակցված մեթոդիկա, որն իր մեջ ներառում է հույզերն արտահայտող և անվանող բառային և դարձվածաբանական միավորների, ինչպես նաև այդ միավորների միջև հարացուցային (մասնավորապես հոմանիշային) կապերի վերլուծություն (մարդակենտրոն, ճանաչողական, իմաստաբանական մոտեցումներ): Իսկ հույզերի ֆիզիոլոգիական և ոչ խոսքային դրսևորումների վերլուծությունը հնարավոր է իրագործել գրական ստեղծագործություններում այդ հույզերի դրսևորումների դիտարկման, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումների իրականացման դեպքում, որն իր մեջ կներառի նաև ասոցիատիվ գիտափորձ (հոգելեզվաբանական մոտեցում): Հարկ է նշել, որ էմոտիոլոգիայի շրջանակներում իրականացվող աշխատանքներում շատ կարևոր է նաև հաշվի առնել տվյալ էթնիկական խմբի մտածելակերպի առանձնահատկությունները՝ ազգային հոգեբանության և բնավորության բնորոշ գծերը, կենցաղային և ազգամշակութային առանձնահատկությունները: Այդ պատճառով կարող ենք վստահորեն ասել, որ հուզայնության կարգի ուսումնասիրությունը պահանջում է բազմակողմանի մոտեցում՝ տարատեսակ մեթոդների կիրառությամբ: Միայն այդ դեպքում հնարավոր է ստանալ ամբողջական պատկեր հուզայնության կարգի վերաբերյալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Апресян В. Ю. Эмоции: современные американские исследования // *Семиотика и информатика*, вып. 34. М., 1994.
2. Балли Ш. Французская стилистика. М., 1961.
3. Бюлер К. Теория языка. М.: Прогресс, 1993.
4. Вежбицкая А. Язык. Культура. Познание. М., 1997.
5. Вежбицкая А. Сопоставление культур через посредство лексики и прагматики. М.: Языки славянской культуры, 2001.
6. Гридин В.Н. Семантика эмоционально-экспрессивных средств языка // *Психолингвистические проблемы семантики* / АН СССР, Ин-т языкознания. М.: Наука, 1983.

7. Гринев-Гриневиц С.В., Сорокина Э.А., Скопюк Т.Г. Основы антрополингвистики. М.: Компания Спутник +, 2005.
8. Ильин Е.П. Эмоции и чувства. СПб.: Питер, 2001.
9. Ионова С.В. Лингвистика эмоций: основные проблемы, результаты и перспективы // *Язык и эмоции: личностные смыслы и доминанты в речевой деятельности*. Сб. науч. труд. Волгоград: ВГПУ, ЦОП Центр, 2004.
10. Калимуллина Л. А. Семантическое поле эмотивности в русском языке: диахронический аспект (с привлечением материала славянских языков): монография. Уфа: РИО Баш ГУ, 2006.
11. Кубрякова Е. С. Парадигмы научного знания в лингвистике и ее современный статус // *Изв. РАН СЛЯ*, т. 53 , № 2, 1994.
12. Мягкова Е.Ю. Эмоционально-чувственный компонент значения слова: вопросы теории. Автореф. дисс. ... докт. филол. наук. М., 2000.
13. Сидоренко А.С. Основные направления в исследовании сущности и объема категории эмотивности // *Вестник ПГУ, Серия А*, № 10, 2013.
14. Тарасова О.Д. Основные направления исследования эмоций в лингвистике // *Вестник МГОУ, Серия 3*, 2015.
15. Телия В.Н. Эмотивность и стилистические функции коннотации // *Коннотативные аспекты семантики номинативных единиц*. М.: Наука, 1986.
16. Филимонова О.Е. Эмоциология текста. Анализ репрезентации эмоций. Санкт-Петербург: Книжный дом, 2007.
17. Шаховский В.И. Эмотивный компонент значения и методы его описания: учебное пособие к спецкурсу. Волгоград: Изд. ВГПИ им. А.С. Серафимовича, 1983.
18. Шаховский В.И., Сорокин Ю.А., Томашева И.В. Текст и его когнитивно-эмотивные метаморфозы (межкультурное понимание и лингвоэкология). Волгоград – Саратов, 1998.
19. Шаховский В.И. О лингвистике эмоций // *Язык и эмоции*. Сб. науч. трудов. Волгоград: Перемена, 1995.
20. Якобсон Р. Лингвистика и поэтика // Структурализм: «за» и «против». М., 1975 // Электронный ресурс: http://plr.iling-ran.ru/upload/book_files/roman_yakobson.pdf
21. Aitchison J. Cognitive clouds and semantic shadows // *Language and Communication*, 5. Oxford, 1985.
22. Foolen Ad The expressive function of language: Towards a cognitive semantic approach // *The language of emotions: Conceptualization, expression, and theoretical foundation* / Niemeier S. & Dirven R. (eds.) Amsterdam: Benjamins, 1997.
23. Goleman D. The emotional intelligence. Why it can matter more than IQ? Bentam Books, 1997.

